

**ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

ՍՏՅՈՊԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ԱՇՈՏ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Ժողովրդական տնտեսության զարգացման ներկա պայմաններում ստեղծվել է հզոր արտադրական պոտենցիալ, որի արդյունավետ և ուսցիոնալ օգտագործումն առաջնակարգ նշանակություն է ստանում: Հանրային արտադրության և նրա առանձին ոլորտների արդյունավետության բարձրացումը տնտեսական կենտրոնական պրոբլեմ է ինչպես ՍՄՀՄ-ում, այնպես էլ սոցիալիստական համագործակցության մյուս երկրներում:

Արտադրության արդյունավետության բարձրացման արդի տնտեսական բաղաբաղանդությունը պայմանավորված է ինչպես զարգացման էքստենսիվ հնարավորությունների խիստ սահմանափակմամբ, այնպես էլ այդ զարգացումը բարդացնող այնպիսի գործոններով, ինչպիսիք են աշխատանքային ռեսուրսների աճի կրճատումը, երկրի արևելյան և հյուսիսային շրջանների յուրացման կապակցությամբ ծախսումների ավելացումը, շրջակա միջավայրի պահպանության համար ներդրումների աճը, արմատական վերակառուցում պահանջող բազմաթիվ հին ձեռնարկությունների առկայությունը, ինֆրակառուցվածքի ետ մնալը էկոնոմիկայի հարաճուն կարիքներից և այլն¹: Նշված գործոնների հետ կապված ծախսումների մեծ մասը թեև չեն ավելացնում թողարկվող արտադրանքի քանակը, սակայն հասարակականորեն անհրաժեշտ են և պահանջում են զգալի աշխատանքային, նյութական և դրամական միջոցներ: Այդ պատճառով էլ երկրի առջև ծառացած տնտեսական և սոցիալական խնդիրների և, առաջին հերթին, ժողովրդի բարեկեցության բարձրացման բազմակողմանի ծրագրի հաջող կենսագործումը հնարավոր է միայն նյութական արտադրության հետագա զարգացման և նրա արդյունավետության բարձրացման միջոցով: Ինչպես նշվեց նաև ՍՄԿԿ XXVI համագումարում, «արտադրության արդյունավետության համակողմանի բարձրացումը արդի տնտեսական զարգացման սկզբունքային հիմքն է, կոմունիստական շինարարության ներկա փուլի տնտեսական-քաղաքական կարևորագույն խնդիրը»²:

Արտադրության ինտենսիվ զարգացման պայմաններում արդյունավետության հարցերի առաջին պլան մղվելը տնտեսագիտությունից պահանջում է կատարել այդ կատարողիայի բովանդակության և դրա դրսևորման ձևերի ու հաշվարկման մեթոդոլոգիայի, գնահատման և պլանավորման ցուցանիշների վերաբերյալ պատշաճ մակարդակի գիտական հետազոտություններ:

Արտադրության արդյունավետության պրոբլեմների ուսումնասիրման անհրաժեշտությունը բխում է նաև ՍՄԿԿ Կենտկոմի հունիսյան (1983 թ.) պլենումի³ և ՍՄԿԿ Կենտկոմի «Ջարդացած սոցիալիզմի տնտեսագիտական տեսություն հանգուցային հարցերի մշակման գործում ՍՄՀՄ գիտությունների առաջնության տնտեսագիտության ինստիտուտի դերի բարձրացման մասին» որոշումից, որտեղ մասնավորապես նշված է. «Ժամանակակից պահանջներին չի համապատասխանում արտադրության արդյունավետության պրոբլեմների ուսումնասիրման մակարդակը՝ նրա գերազանցապես ինտենսիվ զարգացման

¹ «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 60—61:

² Նույն տեղում, էջ 174:

³ «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի պլենումի նյութերը, 14—15 հունիսի, 1983 թ., Երևան, 1983, էջ 22:

պայմաններում: Դրան համապատասխան՝ որոշման մեջ խնդիր է դրվել ճշգրիտ հարել արտադրության արդյունավետության առանցքային հարցերում հետազոտությունների հոտ մնալը... ստեղծել արտադրության արդյունավետության գնահատման չափանիշների և ցուցանիշների համակարգ⁴:

Արտադրության տնտեսական արդյունավետության կարևոր հարցերից է նաև դրա չափման մեթոդների և ցուցանիշների ընտրությունը ժողովրդական տնտեսության հիմնական (սկզբնական) օղակների՝ արտադրական միավորումների և ձեռնարկությունների գործունեության տնտեսական արդյունավետությունը գնահատելու ու պլանավորելու գործում: Ինչպես իրավացիորեն նշելով են Յու. Սովարյանը և Գ. Հարությունյանը, «արտադրության արդյունավետության գնահատման հիմնական խնդիրը արդյունավետության ստույգ որոշումն է, արդյունքը և ծախսեր (ռեսուրսներ) հասկացությունները կոնկրետացնելով, արդյունավետության էությունը համապատասխանող և դրանից բխող քանակական ցուցանիշները ընտրելով»⁵:

Ուսումնասիրվող պրոբլեմի լուծված հարցերից մեկն այն է, թե արտադրության արդյունավետության մակարդակը որոշելիս մեկ առանձին ցուցանիշ է անհրաժեշտ, թե՞ պետք է ցուցանիշների համակարգ: Նշված հարցը տնտեսագիտական գրականության մեջ բանավեճի առարկա է: Առաջին տեսակետի՝ ցուցանիշների համակարգի կողմնակիցների⁶. կարծիքով արտադրության արդյունավետության գիտականորեն հիմնավորված ցուցանիշների մշակումը և կիրառումը պետք է հենվի սոցիալիզմի տնտեսական օրենքների առավել լրիվ ճանաչման և դրանց ակտիվ օգտագործման վրա: Բանն այն է, որ այս կամ այն տնտեսական երևույթի մեջ միահյուսվում են միմյանց վրա ազդող, փոխպայմանավորված և փոխկապակցված տնտեսական օրենքները, ըստ որում, ոչ մի տնտեսական օրենք չի կարող արտահայտել երևույթի բոլոր կողմերը: Այս տեսակետի կողմնակիցների կարծիքով այդ պատճառով էլ արդյունավետության մեկ, ընդհանրացնող կամ սինթետիկ ցուցանիշի օգտագործումը դառնում է անհնար:

Այս հետազոտողների հետ համակարծիք լինելով այն հարցում, որ տնտեսական պրոցեսները բարդ են, չի կարելի համաձայնել նրանց այն կարծիքի հետ, ըստ որի անհնար է մեկ ցուցանիշի միջոցով բնութագրել արտադրության տնտեսական արդյունավետությունը: Դա բացատրվում է նրանով, որ ցանկացած երևույթի բարդ և բազմակողմանի կապերից առանձնանում է դրա ամենաէական կողմն ընդգրկող մեկը, հիմնականը, որի միջոցով էլ հնարավոր է պատկերացում կազմել տվյալ երևույթի մասին ամբողջությամբ: Ի դեպ, դա ընդունում են նաև այդ տեսակետի որոշ կողմնակիցներ⁷: Այստեղ անհրաժեշտ է հիշել Վ. Ի. Լենինի խոսքերն այն մասին, որ ճշարկավոր է կարողանալ յուրաքանչյուր առանձնահատուկ պահին գտնել շղթայի այն հատուկ օղակը, որից պետք է ամբողջ ուժով բռնել՝ ամբողջ շղթան ձեռքին պահելու և հաջորդ օղակին անցնելը հաստատուն կերպով նախապատրաստելու համար...»⁸:

Եթե ընդունենք, որ անհրաժեշտ է ցուցանիշների համակարգ, ապա պարզ

⁴ «Правда», 24. II. 1984.

⁵ Յու. Ս. Սովարյան, Գ. Գ. Հարությունյան, Հասարակական արտադրության արդյունավետության գնահատման մեթոդական հարցեր («Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1977, № 10, էջ 41):

⁶ В. А. Диневич и др., Показатели и критерии эффективности управления. М., 1975, с. 12; С. Малинин, Критерии и показатели экономической эффективности общественного производства («Экономические науки», 1970, № 5, с. 53); К. В. Решетнянский, Основы статистики эффективности общественного производства, М., 1974, с. 14; «Эффективность общественного производства: критерии, методы расчета, показатели», под ред. Б. П. Плышевского, М., 1975, с. 66.

⁷ Տե՛ս, օրինակ, В. А. Диневич и др., նշվ. աշխ., էջ 12:

⁸ Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 36, էջ 253:

չի դառնում, թե դրանց տարբեր ուղղություններով փոխվելու դեպքում (իսկ տնտեսական պրակտիկան հենց դա է ապացուցում) ինչպե՞ս կարելի է պատկերացում կազմել արտադրության տնտեսական արդյունավետության մակարդակի մասին: Արդյունավետության ցուցանիշների համակարգի կողմնակիցներն իրենց տեսակետը հիմնավորում են նաև նրանով, որ դեռևս չկա մեկ միասնական ամփոփ, բոլորի կողմից ընդունված, մեթոդոլոգիական տեսակետից հիմնավորված և գործնականում իրեն արդարացրած ցուցանիշ, որը հնարավոր լինի օգտագործել արտադրության պլանավորման պրակտիկայում: Համաձայնելով այս թեզի հետ, միաժամանակ պետք է նշել, որ երկու ամփոփ ցուցանիշի դեպքում նույնպես դժվար կլինի որոշել, թե արտադրության արդյունավետությունն ինչ ուղղությամբ է փոփոխվում: Բացի այդ, ինչպես իրավացիորեն նշում է Վ. Չերնյավսկին, եթե տնտեսական արդյունավետության վերջնական գնահատման համար օգտագործվի ցուցանիշների համակարգ, ապա գործնական լուծումը պետք է ընդունվի առանձին ցուցանիշների սուբյեկտիվ գնահատման հիման վրա, քանի որ տվյալ լուծման համար ցուցանիշների մի մասը կլինի դրական, իսկ մյուս մասը՝ բացասական նշանով⁹:

Նրկորոգ տեսակետի կողմնակիցներն անհրաժեշտ են համարում ժողովրդական տնտեսության պլանավորման պրակտիկայում օգտագործել մեկ ամփոփ, սինթետիկ, ինտեգրալ (հեղինակները դրանք տարբեր կերպ են կոչում) ցուցանիշ, որը շատ հաճախ անվանվում է չափանիշ¹⁰: Սակայն այս տեսակետը բաժանող տնտեսագետները տարակարծիք են, թե հատկապես որ ցուցանիշն (չափանիշն) է ամփոփ: Այդ պատճառով էլ առաջարկվել և առաջարկվում են մի քանի տասնյակի հասնող ցուցանիշներ, որոնց հիմնական թերությունները բավականին մանրամասն ու հանգամանորեն ցույց են տրված մասնագիտական գրականության մեջ¹¹:

Այստեղ միայն նշենք, որ առաջարկվող բոլոր ամփոփ ցուցանիշների հիմնական թերությունն այն է, որ ամբողջական ծախսերը ստանալու համար արտադրության անձնական և իրային գործոնների գումարման տարբերակներն իրացիոնալ են, և այդ պատճառով հնարավոր չէ ստանալ արտադրության արդյունավետության ամփոփ ցուցանիշ¹²: Ավելին, առանձին հեղինակների կարծիքով կենդանի և առարկայացած ծախսերի համագուման պրոբլեմ ընդհանրապես գոյություն չունի¹³:

Այսպիսով, ստացվում է «փակ» շրջան, քանի որ ցուցանիշների համակարգը միարժեքորեն չի կարող բնութագրել արտադրության արդյունավետության մակարդակը, իսկ բոլորի կողմից ընդունված և գործնականում իրեն արդարացրած ամփոփ ցուցանիշ դեռևս չի մշակվել: Այդ իսկ պատճառով կարծում ենք, որ միանգամայն տրամաբանական է ՄՍՀՄ պետպլանի՝ «ՄՍՀՄ տրն-

⁹ В. О. Чернявский, Эффективность и оптимальность, М., 1977, с. 6.

¹⁰ А. В. Внхляев, Рост эффективности производства и изменение пропорции, М., 1973, с. 12; «Эффективность общественного производства: критерии, методы расчета, показатели», под ред. Б. П. Плышевского, М., 1975, с. 76; «Эффективность экономики развитого социализма», под ред. В. И. Докуняна и Л. Ф. Кондратьева, М., 1976, с. 54; В. О. Чернявский, *ibid.*, *աշխ.*, էջ 6:

¹¹ М. З. Бор, Эффективность общественного производства и проблемы оптимального планирования, М., 1972; Т. С. Хачатуров, Эффективность общественного производства («Вопросы экономики», 1975, № 6); А. Первухин, Методические вопросы определения эффективности общественного производства («Плановое хозяйство», 1977, № 3); «Вопросы теории и оценки экономической эффективности народного хозяйства», М., 1976; Г. Е. Хачатрян, Совершенствование планирования и оценки эффективности затрат, Ереван, 1974.

¹² К. Максимов, Об измерении эффективности социалистического производства («Экономические науки», 1978, № 8, с. 66).

¹³ Տե՛ս օրինակ, В. Черковец, О росте производительности труда и эффектив-

տեսական և սոցիալական զարգացման պլանների մշակման մեթոդական ցուցումներում» (այսուհետև՝ «մեթոդական ցուցումներ») արտադրության տրնտեսական արդյունավետության պլանավորման ցուցանիշների համակարգի օգտագործումը¹⁴։ Այստեղ օգտագործվող ցուցանիշների համակարգը, փաստորեն, վերը նշված երկու տեսակետների «կոմպրոմիսային» տարբերակն է, որի համաձայն օգտագործվում են արդյունավետության ինչպես ամփոփ, այնպես էլ բազմաթիվ մասնակի ցուցանիշներ։

«Մեթոդական ցուցումներում» օգտագործվող ամփոփ ու մասնակի ցուցանիշները հնարավորություն են տալիս ճկուն դարձնելու այդ համակարգը և, ինչնելով կառավարման մակարդակից ու առանձնահատկություններից, արտադրության արդյունավետության գնահատմանը և պլանավորմանը մասնաբաժնիության հնարավորություն տալ։ Առաջարկվող ցուցանիշների համակարգի արժանիքներից է նաև այն, որ դրանք ժողովրդական տնտեսության բոլոր մակարդակների համար միասնական են և ըստ կառավարման մակարդակների էլ՝ շերտավորված։ Պլանավորման գործող կարգի պայմաններում նյութական արտադրության ճյուղերի, միևնույն ճյուղի արտադրության տնտեսական արդյունավետության գնահատման և պլանավորման համար առաջարկվում է հինգ ամփոփ ցուցանիշ, իսկ արտադրական միավորումների (կոմբինատների) ձեռնարկությունների տեխարգֆինպլանի մշակման տիպային մեթոդիկայով¹⁵ արտադրության տնտեսական արդյունավետության բարձրացման պլանավորման ցուցանիշների համակարգը բաժանվում է չորս խմբի. դրանցից առաջին խումբն ընդհանրացնող ցուցանիշներն են՝ արտադրության աճի տեմպերը (ըստ զուտ, ապրանքային (համախառն) արտադրանքի), 1 ռուբլի ծախսերի նկատմամբ զուտ արտադրանքի արտադրությունը, տարբեր արտադրական ռեսուրսների հարաբերական տնտեսումը (դրանք չորսն են), ընդհանուր շահութաբերությունը և ապրանքային (համախառն) արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող ծախսերն ըստ լրիվ ինքնարժեքի։

Սակայն ներկայումս պլանավորման պրակտիկայում օգտագործվող ոչ բոլոր ամփոփ ցուցանիշներն են համապատասխանում արդյունքի և դրա ստացման համար կատարված ծախսերի (կամ ռեսուրսների) համադրման ուղղորդման պահանջին։ Նշենելով այդ պահանջից, քննենք վերը նշված պետական պլանային երկու փաստաթղթերում առաջարկվող ամփոփ ցուցանիշները։ «Արտադրության աճի տեմպերը (ըստ զուտ և ապրանքային (համախառն) արտադրանքի) ամփոփ ցուցանիշը թեև պլանավորման գործում ահաբեկիչ և կարևոր է, սակայն չի բնութագրում արտադրության արդյունավետության մակարդակը, քանի որ հաշվի չի առնում, թե ինչպիսի ծախսումներով է ձեռք բերվել արտադրության աճը։ Աճի բարձր տեմպերի կարելի է հասնել արտադրության մեջ լրացուցիչ ռեսուրսների և նույնիսկ բազիսային ժամանակաշրջանի համեմատ դրանց օգտագործման արդյունավետության իջեցման պայմաններում։ Այդ պատճառով էլ ահաբեկիչ է լրացուցիչ հաշվարկ կատարել, թե արտադրության աճի որ մասն է ձեռք բերվել արտադրական ռեսուրսների և աշխատուժի լավագույն օգտագործման և որ մասը լրացուցիչ միջոցների ընդգրկման միջոցով։

Արտադրության տնտեսական արդյունավետության մյուս ամփոփ ցուցանիշը՝ ապրանքային (համախառն) արտադրանքի մեկ ռուբլուն ընկնող ծախսերն ըստ լրիվ ինքնարժեքի, հաշվի չի առնում արտադրանքի փոխադրման

ности социалистического производства («Плановое хозяйство», 1984. № 4, с. 117).

¹⁴ «Методические указания к разработке государственных планов экономического и социального развития СССР», М., 1980, с. 47—49.

¹⁵ «Типовая методика разработки техпромфинплана производственного объединения (комбината), предприятия», М., 1979, с. 69.

ծախսերի տեսակը: Եթե սահմանված են ֆրանկո-վազոն նշանակման կայարան մեծածախ գներ, ապա արտադրանքի փոխադրման բոլոր ծախսերը կատարվում են արտադրող ձեռնարկության հաշվին, մինչդեռ «արդյունաբերական ձեռնարկություններում արտադրանքի ինքնարժեքի պլանավորման, հաշվառման և արժեքորոշման հիմնական դրույթները» (այսուհետև «հիմնական դրույթներ») համաձայն փոխադրման ծախսերը պլանավորվում և հաշվառվում են ենթարկվում առանձին, առանց արտադրող ձեռնարկության արտադրանքի ինքնարժեքի մեջ մտցնելու¹⁶: Մինչև 1971 թ. հունվարի 1-ը նախկին (1954 թ.) «հիմնական դրույթներով» փոխադրման ծախսերը ֆրանկո-վազոն նշանակման կայարան մեծածախ գների դեպքում հաշվի էին առնվում արտադրանքի լրիվ ինքնարժեքում («արտաարտադրական ծախսեր» հոդվածում): Այդ պատճառով էլ այն արտադրատեսակների (դրանք մեծ մասամբ ժողովրդական «պառման» ապրանքներն են) համար, որոնց վրա սահմանված են ֆրանկո-վազոն նշանակման կայարան մեծածախ գներ, մեկ ուրիշ ապրանքային (համախառն) արտադրանքին ընկնող ծախսերի ցուցանիշը չի կարող լրիվ և ճշգրիտ արտահայտել արտադրության տնտեսական արդյունավետության մակարդակը:

Արտադրության տնտեսական արդյունավետության ամփոփ ցուցանիշ չի կարող լինել նաև առանձին արտադրական ռեսուրսների (հիմնական արտադրական ֆոնդերի, նորմավորվող շրջանառու միջոցների, նյութական ծախսերի (առանց ամորտիզացիայի), աշխատանքի վարձատրության ֆոնդի) հարաբերական տնտեսումը, քանի որ դրանք ընդհանրում են արտադրության պրոցեսին մասնակցող առանձին, մասնակի ռեսուրսների տնտեսումը: Մինչդեռ արտադրության արդյունավետության ամփոփ ցուցանիշը ստանալու համար ավելի կարևոր է բոլոր ռեսուրսների տնտեսումն ամբողջությամբ, որը, անշուշտ, մասնակի գործոնների տնտեսումից ստացված մեծությունների մեխանիկական գումար չէ¹⁷:

Ինչպես տիպային մեթոդիկայում և մեթոդական ցուցումներում, այնպես էլ տնտեսագիտական գրականության մեջ ժողովրդական տնտեսության սկզբնական օգնիկների գործունեության տնտեսական արդյունավետությունը գնահատելու նպատակով որպես արդյունքի ցուցանիշ առաջարկվում է զուտ (նորմատիվային) արտադրանքը¹⁸: Դրա օգտագործման վերաբերյալ առաջարկներ արվել են վաղուց¹⁹: Սակայն զուտ (նորմատիվային) արտադրանքի ցուցանիշի այդպիսի ֆունկցիայի հետ դժվար է համաձայնվել: Ինչպես իրավացիորեն նշում է Լ. Արալիինը, «անցումը զուտ (նորմատիվային) արտադրանքի պլանավորման ունի կարևոր նշանակություն: Այն չի կարելի ո՛չ թերագնահատել և ոչ էլ վերագնահատել: Զուտ (նորմատիվային) արտադրանքի ցուցանիշը ունի ոչ միայն դրական, այլև բացասական կողմեր»: Այնուհետև նա շարունակում է. «Իդեալական ցուցանիշներ չկան, պլյուսներ և մինուսներ ունի դրանցից յուրաքանչյուրը»²⁰:

¹⁶ «Основные положения по планированию, учету и калькулированию себестоимости продукции на промышленных предприятиях», М., 1971, с. 8.

¹⁷ Ю. О. Чернов, Система показателей экономической эффективности общественного производства: (Планоное хозяйство), 1982, № 8, с. 46).

¹⁸ «Արտադրության արդյունավետության բարձրացման գլխավոր շախմատը զուտ արտադրանքի (երկրի մասշտաբով՝ ազգային եկամտի) ծավալի առավելագույն ավելացումն է» («Основы экономики, организации и планирования промышленных предприятий», М., 1982, с. 210).

¹⁹ S. O. Ophian, В. О. Чернявский, Эффективная экономика, М., 1967, с. 8, «Эффективность общественного производства: критерии, методы расчета, показатели», под ред. Б. П. Плышевского, М., 1975, с. 76.

²⁰ Л. И. Абалякин, Конечные народнохозяйственные результаты: сущность, показатели, пути повышения, М., 1982, с. 42.

Ջուտ (նորմատիվային) արտադրանքի ցուցանիշի զլխավոր ֆունկցիան տնտեսական գործունեության արդյունավետության համար արդյունքի գնահատումը է, այլ «նորմատիվային ղուտ արտադրանքի ցուցանիշի տնտեսական ռովանդակությանը համապատասխան այն օգտագործվում է արտադրության ֆիդիկական ծավալի դինամիկան (աճ տեմպեր), աշխատանքի արտադրողականությունը որոշելու, աշխատավարձի ֆոնդը պլանավորելու և դրա օգտագործումը վերահսկելու համար»²¹։ Արտադրության պլանավորման ժամանակ օգտագործվող յուրաքանչյուր ցուցանիշ պետք է ունենա իր ֆունկցիոնալ նշանակությունը, «գործունեության» ոլորտը և ցուցանիշների համակարգում չպետք է փոխարինի կամ կրկնօրինակի մյուս ցուցանիշներին։

Ամբողջ ժողովրդական տնտեսության գործունեության արդյունավետությունը գնահատելու տեսակետից կարևոր են ղուտ արտադրանքի (աշգային և կամտի) ցուցանիշի օգտագործումը և պլանավորումը։ Ինչպես նշել է Տ. Խաչատուրովը, «հասարակության ստացված արդյունքը առավել լրիվ արտացոլվում է աշգային եկամտի ցուցանիշներով. այդպիսի ըմբռնումը ներկայումս դառնում է գրիթ տիրապետող»²²։ Սակայն ղուտ (նորմատիվային) արտադրանքի միջոցով հնարավոր է գնահատել արտադրական միավորման (ձեռնարկության) գործունեությունը։ Արտադրական այս շղակների համար ղուտ (նորմատիվային) արտադրանքը բաղկացած է տնտեսական տեսակետից միմյանց հակադիր երկու մասից՝ աշխատավարձից (սոցիալական ապահովության հատկացումների հետ միասին), որի իջեցմամբ, արտադրանքի միավորի հաշվով, շահագրգռված է տնտեսական օղակը, և շահույթից, որի ավելացմանն ուղղված է նշված օղակների գործունեությունը։ Արտադրական միավորման (ձեռնարկության) համար ղուտ (նորմատիվային) արտադրանքի մի մասը՝ աշխատավարձը, ոչ թե արդյունք է, այլ ծախս²³, որը մտնում է արտադրանքի ինքնարժեքի մեջ, նույնպիսի ծախս, ինչպես, օրինակ, օգտագործվող աշխատանքի միջոցների մաշվածքը։ Ստացվում է, որ արդյունավետության հաշվարկման ժամանակ միևնույն տարրը հանդես է գալիս և՛ որպես արդյունքի բաղկացուցիչ մաս, և՛ որպես ծախս։ Նման մոտեցումը, մեր կարծիքով, ոչնչով չի հիմնավորված և պլանավորման պրակտիկայում անընդունելի է։ Ավելին, ժողովրդական տնտեսության աշխատատար ճյուղերում արտադրանքի արտադրության ծախսերի կառուցվածքում աշխատավարձը սոցիալական ապահովության հատկացումների հետ միասին զգալի բաժին է կազմում։ Այսպես, 1982 թ. ծախսերի այդ հոդվածի տեսակարար կշիռը ՍՍՀՄ արդյունաբերության ծախսերում կազմել է 14,5, մեքենաշինության և մետաղամշակման ճյուղերում՝ 22,9, անտառամթերման ճյուղում՝ 34,6, փայտամշակման ճյուղում՝ 23,1, ապակու, հախճապակու-ճենապակու ճյուղում՝ 33%²⁴։ Առանձին արտադրական միավորումներում (ձեռնարկություններում) աշխատավարձի և սոցիալական ապահովության հատկացումները ինքնարժեքի կառուցվածքում ալելի մեծ տեսակարար կշիռ են կազմում։ Այսպես, «Հայաստանի հանրա-

²¹ «Մեթոդական ցուցումներ ղուտ արտադրանքի (նորմատիվային) ցուցանիշը մշակելու և պլանավորման մեջ կիրառելու կարգի մասին» («Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1980, № 8, էջ 4)։

²² «Вопросы экономики», 1975, № 6, с. 132.

²³ Համանման կարծիք են նաև բազմաթիվ հեղինակներ. տե՛ս մասնավորապես՝ «Эффективность общественного производства и факторы ее изменения. Доклады международного симпозиума, София, 8—10 декабря», 1976, София, 1978, с. 47; М. М. Константинова, З. В. Соколовский, Экономическая эффективность производства, М., 1974, с. 42; И. Чистяков, Система показателей эффективности общественного производства («Экономическая газета», 1972, № 34, с. 10); Я. Кваша, Измерение эффективности общественного производства («Вопросы экономики», 1975, № 5, с. 135).

²⁴ «Народное хозяйство СССР в 1982 г.», М., 1983, с. 139.

ին ջրեր» արտադրական միավորման արտադրության ծախսերի կառուցվածքում «արտադրական բանվորների հիմնական և լրացուցիչ աշխատավարձ» և «հատկացումներ սոցիալական ապահովությանը» հոգվածների բաժինը 1983 թ. կազմել է 40,3%, իսկ հանքային ջուր լցնող առանձին գործարաններում այն ավելի բարձր է։ Այսպես, օրինակ «Դիրիջան» գործարանում, որտեղ միջին ճյուղային ցուցանիշի համեմատ ձեռքի աշխատանքների ծավալը ավելի մեծ է, նշված հոգվածների բաժինն ինքնարժեքի կառուցվածքում կազմել է 50,1%²⁵։

Եթե ազգային եկամտի, այդ թվում նուև աշխատավարձի ֆոնդի մեծացումը ամբողջ հասարակության մասշտաբով համապատասխանում է սոցիալիստական արտադրության նպատակին, ապա ժողովրդական տնտեսության սկզբնական օղակների համար, ընդհակառակը, խնդիր է դրվում արտադրանքի միավորի հաշվով իջեցնել աշխատավարձի բաժինը։ Այդ առումով Գ. Աղաջանյանը միանգամայն ճիշտ է՝ գրելով, որ «աշխատավարձը ամբողջ հասարակության մասշտաբով քննարկելիս հանդես է գալիս որպես ազգային եկամտի մի մաս, իսկ ձեռնարկության մասշտաբով՝ որպես արտադրության ծախքերի տարր։ Աշխատավարձի երկակի բնույթի հետ նաև կապված է արտադրության արդյունավետության չափանիշների տարբերությունը ամբողջ ժողովրդական տնտեսության և առանձին ձեռնարկության մասշտաբով»²⁶։ Բացի այդ, «սիստեմայի զուտ արտադրանքը կարող է ավելանալ այն դեպքում, եթե ձեռնարկության աշխատավարձի աճը գերազանցում է աշխատանքի արտադրողականության աճին, և արտադրանքի ինքնարժեքը մեծանում է»²⁷։ Այդ իրողությունը ապացուցվում է նաև պրակտիկայով։ Այսպես, օրինակ, 1982 թ. ՍՍՀՄ արդյունաբերության մասշտաբով մեկ տոկոս աշխատանքի արտադրողականության հավելածին բաժին է ընկել աշխատավարձի հավելած 1,79, իսկ շինարարությունում՝ 1,61%-ի չափով։ Աշխատանքի արտադրողականության հավելածի նկատմամբ աշխատավարձի հավելածի ավելի արագ աճ (1,03%) 1975—1980 թթ. նկատվել է ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության մակարդակով²⁸։

Առանձին ճյուղերի, արտադրական միավորումների (ձեռնարկությունների) համար զուտ (նորմատիվային) արտադրանքի մեծությունը չի արտացոլում առարկայացած աշխատանքի տնտեսումը կամ գերաժախսը²⁹, այն ղեկավարում, երբ, օրինակ, 1982 թ. ՍՍՀՄ արդյունաբերական արտադրանքի արտադրության ծախսերի ավելի քան 80%-ը³⁰ բաժին է ընկել առարկայացած աշխատանքային ծախսերին։ Զուտ (նորմատիվային) արտադրանքի օգնության հաշվարկված ցուցանիշները հավաստի հիմք են տալիս կենդանի աշխատանքի հետ կապված ցուցանիշների հաշվարկման և բնութագրման համար։ Սակայն արտադրության դարգացման ներկա պայմաններում, երբ արդյունքի արժեքի մեծ մասը կազմում են առարկայացած աշխատանքային ծախսումները, առավել կարևոր են այդ ծախսերի հաշվառումը և պլանավորումը³¹։

²⁵ Հաշվարկը կատարվել է «Հայաստանի հանքային ջրեր» արտադրական միավորման տվյալների հիման վրա։

²⁶ Գ. Ս. Աղաջանյան, Շահութաբերության ցուցանիշները, Երևան, 1979, էջ 25։

²⁷ В. О. Чернявский, Конечный синтетический показатель эффективности производства («Известия АН СССР, Серия Экономическая», 1980, № 6, с. 46)։

²⁸ Н. Лагутин, Социальная программа и эффективность производства («Слово лектора», 1984, № 2, с. 12)։

²⁹ Դա ընդունում են նաև զուտ (նորմատիվային) արտադրանքի ցուցանիշի կողմնակիցները։ տե՛ս օրինակ, Г. Я. Киперман, Статистические показатели промышленной продукции и их совершенствование, М., 1980, с. 264։

³⁰ «Народное хозяйство СССР в 1982 г.», М., 1983, с. 139։

³¹ Զուտ (նորմատիվային) արտադրանքի ցուցանիշի ոչ կատարյալ լինելու մասին տե՛ս «Об изменениях и дополнениях к методическому указанию по применению показателя НЧП» («Плановое хозяйство», 1984, № 5, с. 113—116)։

Բավական է նշել, որ արդյունքի նյութատարության և ֆոնդատարության մեկ կեսով կրճատումը 5—6 անգամ գերազանցում է աշխատավարձի ֆոնդի տրնտեսման չափը³²։ Այդ պատճառով էլ արտադրության ժամանակակից պայմաններում միայն կենդանի աշխատանքի տնտեսումը չի կարող բնութագրել արտադրության արդյունավետությունը։

Վերը բերված փաստարկները թույլ չեն տալիս զուտ (նորմատիվային) արտադրանքի օգնության գնահատել և պլանավորել տնտեսաշարժարկային գործունեության ամփոփ արդյունքը և այն օգտագործել ժողովրդական տնտեսության սկզբնական օղակների տնտեսական գործունեության արդյունավետությունը հաշվարկելու համար։ Ինչպես «մեթոդական ցուցումներում» և «տիպային մեթոդիկայում», այնպես էլ տնտեսագիտական գրականության մեջ առաջարկվող արտադրության տնտեսական արդյունավետության ամփոփ ցուցանիշներինց այդ ֆունկցիային առավել լրիվ ձևով համապատասխանում է շահութաբերությունը, որն էլ բնութագրում է արտադրության տնտեսական արդյունավետությունը նյութական արտադրության ձյուղերում, արտադրական միավորումներում և ձեռնարկություններում։

Սոցիալիզմի պայմաններում շահույթի ստացումը արտադրության նպատակ է, այլ բնակչության բարեկեցության նպատակման միջոցներից մեկն է։ Արտադրամիջոցների հանրային սեփականության պայմաններում շահույթն իր էությունը, անվանումից բացի, որն է այլ ընդհանրություն չունի կապիտալիստական շահույթի հետ։ Սոցիալիստական արտադրամիջոցների տնտեսական պայմաններում շահույթի գոյությունը կապված է տնտեսական հաշվարկի հետ։ Դեռևս կոմունիստական շինարարության արշալույսին Վ. Ի. Լենինը գրել է, որ «տրեստներն ու ձեռնարկությունները հիմնված են տնտեսական հաշվարկի վրա հենց նրա համար, որպեսզի նրանք իրենք պատասխանատու լինեն և ընդամենը ամբողջապես պատասխանատու լինեն իրենց ձեռնարկությունների շահութաբերության համար»³³։ Կ. Մարքսը նշում է, որ շահույթի աճը ցույց է տալիս այն ընդհանուր օրինաչափությունը, որը մարդկությանը սովորեցնում է խնայողաբար ծախսել իր ուժերը և միջոցների նվազագույն ծախսումով հասնել արտադրության նպատակին³⁴։

Շահութաբերության ցուցանիշն ավելի ամփոփ ձևով է բնութագրում ժողովրդական տնտեսության սկզբնական օղակների գործունեության արդյունավետությունը, քան մնացած ցուցանիշները։ Դա պայմանավորված է նրանով, որ շահութաբերությունն արտացոլում է ոչ միայն բուն արտադրության, այլ նաև արտադրանքի իրացման արդյունավետությունը, այսինքն վերարտադրության փուլն ընդգրկում է ամբողջությամբ։ Բացի այդ, շահութաբերության ցուցանիշը մնացածների համեմատ ունի այն առավելությունը, որ միևնույն տնտեսական տարրը (ինքնարժեք, ամբողջիզացիա) հանդես չի գալիս և՛ որպես արդյունքի, և՛ ծախսերի (ոնսուրսների) բաղադրամաս։ Այս ամենից բացի, շահութաբերությունը չունի վերը քննված ցուցանիշներին բնորոշ թերությունները։ Մեր կարծիքով, պլանավորման պրակտիկայում շահութաբերության՝ ըստ արտադրական ֆոնդերի հաշվարկման ցուցանիշից բացի պետք է օգտագործել նաև ըստ ինքնարժեքի հաշվարկված ցուցանիշը։ Միևնույն տնտեսական բովանդակությունն ունեցող մեծության տարբեր չափումները կատարելիս պետք է ելնել ուսումնասիրվող օբյեկտի (ձյուղ, արտադրական միավորում, ձեռնարկություն) առանձնահատկություններից։ Փոնդատար օբյեկտներում նպատակահարմար է առաջին ցուցանիշի օգտագործումը, իսկ մնացած օբյեկտներում՝ երկրորդը, քանի որ վերջիններում արտադրության արդյունավետության վրա, արտադրական ֆոնդերի օգտագործումից բացի, ազդում են

³² А. Багдасаров, С. Первухин, Производительность труда: теория, практика, резервы роста («Коммунист», 1963, № 2, с. 19).

³³ Վ. Ի. Լենին, Նժ, հ. 35, էջ 589։

³⁴ К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 26, ч. II, с. 608.

նաև այլ, ոչ պակաս նշանակություն ունեցող գործոններ, որոնք հաշվի են առնվում լրիվ ինքնարժեքում (նկատի ունենք նաև փոխադրման ծախսերի տեսակը):

Անհրաժեշտ է նշել, որ կառավարման գլոբալ մակարդակում (ժողովրդական տնտեսության) շահութաբերությունը չի կարող կատարել արտագրության արդյունավետության ամփոփ ցուցանիշի դեր, քանի որ սոցիալիզմի պայմաններում շահույթը չի արտահայտում ամբողջ երկրի մասշտաբով ստեղծված դուրս եկամուտը: Պետության դուրս եկամտի ղեկի մասը ունի շրջանառության հարկի ձև: Այսպես, 1982 թ. ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության բոլոր դրամական կուտակումները (առանց կուտնտեսությունների) կազմել են 276,1 մլրդ ռ., որից 133,7 մլրդ ռ. (կամ ամբողջ կուտակումների 48,5%-ը) եղել է շահույթը, իսկ շրջանառության հարկի բաժինը եղել է 36,4%: մնացածը կազմել են այլ դրամական կուտակումները³⁵:

Արտագրության տնտեսական արդյունավետության ամփոփ ցուցանիշի բնութագրության և պլանավորման գործում ուսանելի է Տնտեսական փոխօգնության խորհրդի անդամ եվրոպական սոցիալիստական երկրների փորձը³⁶: 1960-ական թվականներին այդ երկրներում որպես արդյունավետության կոմպլեքս ցուցանիշ ընդունվեց շահույթը, իսկ 1970-ական թվականներին համարյա բոլոր երկրներում սկսեցին փնտրել արդյունավետության այլ չափանիշներ: Սակայն այժմ կարելի է նշել նոր միտումի մասին, որը դրսևորվում է արդյունավետության գնահատման մեկ չափանիշ (գլխավոր ցուցանիշ) ունեցող համակարգի ձևով: Բուլղարիայում և Հունգարիայում ներկայումս ձևավորված պլանավորման ամբողջ համակարգը խարսխվում է մեկ չափանիշի վրա: Բուլղարիայում զազուտ շահույթի մասսայի հավելաձև է, իսկ Հունգարիայում՝ շահութաբերության ձեռք բերված մակարդակը: Այդ նույն ուղղությամբ է զարգանում նաև արդյունավետության գնահատման համակարգը ՉՍՄՀ-ում:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը շարադրվածը, կարող ենք ասել, որ ժողովրդական տնտեսության ինտենսիվ զարգացած պայմաններում սրտագրական միավորումների և ձեռնարկությունների արտագրական գործունեության բնութագրման համար ավելի մեծ նշանակություն է ստանում տնտեսական արդյունավետության գնահատումը: Դրա համար պետք է ունենալ մեկ ամփոփ ցուցանիշ, որը կարող է լինել շահութաբերությունը (ըստ արտագրական ֆոնդերի և ըստ ինքնարժեքի): Կարծում ենք, անհրաժեշտ է վերականգնել շահութաբերության նախկին դերը և նշանակությունը, քանի որ այսօրվա գոյություն ունեցող արդյունավետության ցուցանիշներից միայն նա է առավել լրիվ և ճիշտ բնութագրում ժողովրդական տնտեսության սկզբնական (հիմնական) օղակների գործունեության տնտեսական արդյունավետությունը:

К ВОПРОСУ ОЦЕНКИ ЭКОНОМИЧЕСКОЙ ЭФФЕКТИВНОСТИ ПРОИЗВОДСТВА В УСЛОВИЯХ РАЗВИТОГО СОЦИАЛИЗМА

СТЕПА МУРАДЯН, АШОТ МАРКОСЯН

Резюме

В условиях интенсивного развития народного хозяйства первостепенное значение приобретает повышение экономической эффективности

³⁵ «Народное хозяйство СССР в 1982 г.», М., 1983, с. 511.

³⁶ Н. В. Власова, Стимулирование эффективности производства (опыт европейских стран СЭВ), («Вопросы экономики», 1984, № 4, с. 106).

производства. В экономической литературе предлагались и предлагаются, а в практике планирования используются как обобщающие, так и частные показатели повышения экономической эффективности производства. Но, несмотря на это, из этих показателей не все соответствуют принципиальному требованию определения экономической эффективности производства посредством соотношения результата к затратам или использованным (авансированным) ресурсам.

В основных (первичных) звеньях народного хозяйства уровень экономической эффективности производства необходимо оценивать с помощью показателя рентабельности (по производственным фондам и по себестоимости) и, следовательно, деятельность и экономическое стимулирование этих звеньев должны осуществляться с учетом этого показателя.